ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Փրայմ Կապիտալ» ՍՊԸ-ի 2023թ-ի օգոստոսի
10-ի խորհրդի թիվ 03/23 որոշմամբ
Խորհրդի նախագահ՝ Սերգեյ Շևչենկո

«ՓՐԱՅՄ ԿԱՊԻՏԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2023

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Փրայմ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) «Գործարար վարվելակերպի և էթիկայի կանոններն» (այսուհետ՝ Կանոններ) արտացոլում են Ընկերության առաքելությունն ու արժեքները, նպաստում են Ընկերության կորպորատիվ մշակույթի բարձրացմանը, կորպորատիվ հեղինակության ու համբավի աճին և ամրապնդմանը, Ընկերության և աշխատակիցների վարքագծի կանոնակարգմանը, ֆոնդի կառավարիչների գործունեության կարգավորմանը:

1.2. Սույն Կանոնները ենթադրում են, որ կորպորատիվ որոշումները պետք է համապատասխանեն օրենսդրության և նորմատիվ փաստաթղթերի պահանջներին, ընկերության ներքին քաղաքականություններին և ընթացակարգերին, ինչպես նաև կորպորատիվ հիմնարար արժեքներին:

1.3. Սույն Կանոնների կիրառման ոլորտներն են.

- ✓ Ընկերության և աշխատակիցների միջև փոխհարաբերությունները,
- ✓ աշխատակիցների միջև փոխհարաբերությունները,
- ✓ Ընկերության շահակիցների հետ փոխհարաբերությունները,
- ✓ պետական կառավարման մարմինների հետ փոխհարաբերությունները,
- ✓ շահերի բախման կարգավորման գործընթացը,
- ✓ Ընկերության կազմում կամ անունից ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Կառավարիչներ) էթիկայի և մասնագիտական չափանիշների սահմանում:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կանոններում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

2.1. **«Ընկերություն»՝** «Փրայմ Կապիտալ» ՍՊԸ,

2.2. **«Կառավարիչ»՝** «Փրայմ Կապիտալ» ՍՊԸ,

2.3. **«Աշխատակից»**՝ անձ, ում հետ Ընկերությունը կնքել է աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիր,

2.4. **«Հաճախորդ»՝** անձ, ով հանդիսանում է ընկերության կողմից կառավարվող ֆոնդի փայերի սեփականատեր կամ դիմում է Ընկերությանը՝ նրա ծառայություններից օգտվելու նպատակով,

2.5. **«Ծառայողական տեղեկություններ»**՝ ինչպես որ սահմանված է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 97-րդ հոդվածով:

ԳԼՈՒԽ 3. ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

3.1. Ընկերության գործարար վարվելակերպի կանոնները սահմանում են նրա գործունեության բարոյական հիմքերը, որոնք ընդունվում և պահպանվում են Ընկերության կողմից իր ամենօրյա գործունեության ընթացքում: Ընկերությունը կարևորում է մասնագիտական էթիկայի հետևյալ սկզբունքները.

- *Բարեխղճությունը:* Ընկերությունը պետք է արժեթղթերի շուկայում իր մասնագիտական գործունեությունն իրականացնի բարեխղճորեն, այսինքն՝ լիարժեքորեն գործադրի իր մասնագիտական հմտությունը, փորձը և գիտելիքները, ինչպես նաև գործի այնպիսի շրջահայացությամբ և պատասխանատվությամբ, որոնք անհրաժեշտ են հաճախորդների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:
- *Պատասխանատվությունը:* Ընկերությունը գիտակցում է իր պատասխանատվությունը իր շահակիցների նկատմամբ: Ընկերությունը նպատակաուղղված է մշտապես բարձրացնելու իր գործունեության անվտանգությունն ու հուսալիությունը, որակն ու արդյունավետությունը: Ընկերությունը հակված է դեպի ներդրումների կառավարման նորարարական մոտեցումները:
- *Օրինականությունը:* Մասնագիտական գործունեություն իրականացնելիս Ընկերությունը պարտավոր է անշեղորեն պահպանել ՀՀ գործող օրենքների, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերի և Ընկերության ներքին կանոնակարգերով սահմանված պահանջները, ինչպես նաև բոլոր հնարավոր ողջամիտ և օրինական միջոցներով պահանջել իր հաճախորդներից դրանց պահպանումը:
- *Գործընկերությունը:* Ընկերությունը գիտակցում է, որ գործընկերների հետ գտնվում է արժեքի ստեղծման միևնույն շղթայում, և որ գործընկերների հաջողությունը սեփական հաջողության գրավականն է:
- *Հաճախորդի շահերի գերակայությունը:* Ընկերությունը պետք է ձեռնարկի բոլոր խելամիտ քայլերը, որպեսզի հաճախորդի համար ապահովի հնարավոր լավագույն արդյունք:
- *Արհեստավարժությունը:* Ընկերությունը պարտավոր է ապահովել իր աշխատակիցների կողմից սույն կանոնների պահպանումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաճախորդների մասնագիտական ծառայություններ մատուցելու համար ներգրավել համապատասխան մասնագիտական գիտելիքներ և պատրաստվածություն ունեցող սույն կանոններով սահմանված պահանջներին բավարարող մասնագետների:

- *Թափանցիկությունը:* Ընկերությունը պարտավոր է ապահովել տեղեկատվության բացահայտումը ՀՀ գործող օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով և Ընկերության ներքին կանոնակարգերով սահմանված կարգով:
- *Բարեվարքությունը:* Ընկերությունը ստանձնել է էթիկական և պատասխանատու կառավարման հանձնառություն: Ընկերությունը՝ որպես երկարաժամկետ հաջողության և կայուն աճի գրավական, բարձր է գնահատում շահակիցների հետ պատասխանատու, ազնիվ, վստահելի, թափանցիկ, փոխշահավետ և կայուն հարաբերությունների ձևավորումը և բարեվարքության մշակույթի տարածումը իր շահակիցների և ընդհանրապես հասարակության մեջ:

ԳԼՈՒԽ 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

4.1. Ընկերությունն իր աշխատակիցների հետ հարաբերությունները կառուցում է երկարատև համագործակցության և փոխադարձ հարգանքի, ինչպես նաև փոխադարձ պարտականությունների անշեղորեն կատարման սկզբունքների հիման վրա:

4.2. Ընկերությունն իր բոլոր աշխատակիցների համար պետք է ապահովի միևնույն հնարավորություններն ու իրավունքները՝ անկախ ազգային պատկանելությունից, սեռից, սեռական կողմնորոշվածությունից, ամուսնական կարգավիճակից, կրոնից, տարիքից, ֆիզիկական անկարողունակությունից, քաղաքացիական կարգավիճակից կամ ՀՀ օրենքներով սահմանված որևէ այլ խոցելի խմբին պատկանելությունից: Նման քաղաքականությունը Ընկերությանը չի արգելում այս կամ այն աշխատիցներին պարգևատրել, տեղափոխել այլ բաժին, ուղարկել վերապատրաստման կամ էլ աշխատանքից ազատել՝ ելնելով ամեն մի աշխատակցի կողմից դրսևորած արդյունքներից կամ թերություններից:

4.3. Ընկերությունը պետք է ստեղծի այնպիսի մթնոլորտ, որտեղ յուրաքանչյուր աշխատակից կձգտի արդյունավետ կերպով կատարել իր առջև դրված առաջադրանքները, հանդես կգա նոր նախաձեռնություններով, կձգտի կատարել Ընկերության գործունեությանը խթանող աշխատանքներ:

4.4. Ընկերության աշխատակիցը պարտավոր է անհապաղ տեղյակ պահել իր անմիջական ղեկավարին՝ այլ աշխատանքի անցման առաջարկ ստանալու կամ այդպիսի մտադրության վերաբերյալ:

4.5. Ընկերության աշխատակցին արգելվում է առաջացնել այնպիսի իրավիճակներ, որոնք կարող են վնաս հասցնել Ընկերության գործարար համբավին, նրա նյութական և ոչ նյութական շահերին:

4.6. Խրախուսելի է թիմային աշխատանքը, միմյանց նկատմամբ հարգանքը, աշխատողների հետաքրքրությունների արժևորումը: Յուրաքանչյուր աշխատակից կարող է հանդես գալ իր իսկ նախաձեռնություններով և մտահղացումներով, որոնք կնպաստեն գործունեության արդյունավետության բարելավմանը:

ԳԼՈՒԽ 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐ

5.1. Ընկերությունը հարգում է իր աշխատակիցների իրավունքները, ապահովում է հավասար վերաբերմունք նրանց նկատմամբ: Ընկերության աշխատակիցներն ունեն հավասար հնարավորություններ բացահայտելու իրենց աշխատանքային և ստեղծագործական ներուժը:

5.2. Ընկերության աշխատակիցները չպետք է ֆիզիկական կամ հոգեբանական բռնութուն գործադրեն մեկը մյուսի նկատմամբ՝ ելնելով ազգային խտրականությունից, սեռից, սեռական կողմնորոշվածությունից, մաշկի գույնից, ամուսնական կարգավիճակից, տարիքից, կրոնից, ֆիզիկական անկարողունակությունից, քաղաքացիական կարգավիճակից կամ ՀՀ օրենքներով հաստատված որևէ այլ խոցելի խմբին պատկանելությունից:

5.3. Յուրաքանչյուր աշխատակից պետք է օժտված լինի հարգանքի, ազնվության, արդարության, բարեխղճության և արժանապատվության հատկանիշներով, լինի անաչառ, անկողմնակալ, զուսպ և օրինակելի: Պետք է զերծ մնա այնպիսի գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել Ընկերության բնականոն աշխատանքային ընթացքը:

5.4. Ընկերության աշխատակիցները պետք է մշտապես կատարելագործեն իրենց մասնագիտական ունակությունները՝ փնտրելով գործունեության նոր հնարավորություններ, բաց լինել փորձի փոխանակման և առաջադիմական մոտեցումների ու նորագույն տեխնոլոգիաների ընկալման ու ներդրման գործում, ձգտեն սեփական գործունեության որակի կատարելագործման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, նպաստեն Ընկերությունում բարենպաստ աշխատանքային միջավայրի ձևավորմանը և պահպանմանը:

5.5. Աշխատակիցները Ընկերության առաքելության ու ռազմավարական նպատակների իրագործման համար պետք է միավորվեն թիմում՝ կրելով անձնական պատասխանատվություն անձնական և կոլեկտիվ գործունեության համար, անհրաժեշտության դեպքում օգնեն թիմի այլ անդամներին, գիտակցեն աշխատանքի արդյունքի և Ընկերության զարգացման կապը, գործադրեն բոլոր հնարավոր ջանքերը անձնային, թիմային և ընդհանուր կորպորատիվ աճի ապահովման համար:

5.6. Ընկերության աշխատակիցները կարող են զբաղվել քաղաքական գործունեությամբ միայն աշխատանքային ժամերից հետո: Այդպիսի դեպքերում նրանք պետք է հանդես գան ոչ թե որպես Ընկերության աշխատակից, այլ ՀՀ քաղաքացի՝ չօգտագործելով իրենց դիրքն ու Ընկերության անունը որևէ քաղաքական գործունեություն ծավալելու համար:

5.7. Աշխատակիցները չպետք է Ընկերության գործունեությանը և հաճախորդներին վերաբերվող տեղեկատվությունը քննարկումների առարկա դարձնեն (այնպիսի քննարկումների, որոնք բացահայտ զրպարտչական բնույթ են կրում և ոչ մի կերպ չեն առնչվում իրենց գործունեությանը Ընկերությունում):

5.8. Ընկերության աշխատակիցը համակարգչային և այլ տեխնիկան, կապի միջոցները, Ընկերության տեղեկատվական և ցանցային ռեսուրսները կարող է օգտագործել բացառապես Ընկերության ներքին ակտերով սահմանված դեպքերում և ձևերով:

5.9. Աշխատակիցներին արգելվում է սոցիալական ցանցերում Ընկերության գործունեության, գործառույթների, որոշումների, գործարքների, Ընկերության գործունեությանն առնչվող խնդիրների և իրավական հարցերի վերաբերյալ լուրեր տարածելը, մեկնաբանելը, քննադատելը և քննարկելը, եթե չունեն նման լիազորություն, անհրաժեշտության դեպքում սեփական էջում կիսվել Ընկերության պաշտոնական հրապարակումներով, նյութերով:

5.10. Նորանշանակ աշխատողները նախապես ծանոթանում են Ընկերության «Գործարար վարվելակերպի և էթիկայի կանոններին»՝ առավելագույն իրազեկված լինելու և Ընկերությունում գործարար վարվելակերպի բարձր մակարդակի պահպանումն ապահովելու նպատակով:

5.11. Սույն կանոնների որևէ դրույթի անորոշության դեպքում Աշխատակիցը պարտավոր է դիմել իր անմիջական ղեկավարին:

5.12. Գործարար վարվելակերպի կանոնների ոտնահարումը կամ խախտումը կարող է հանգեցնել կարգապահական պատժամիջոցների կիրառմանը, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրի լուծմանը:

ԳԼՈՒԽ 6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

6.1. Ընկերության հարաբերությունները հաճախորդների, գործընկերների, պետական մարմինների հետ կառուցվում են օրինականության, բարեխղճության, ազնվության, փոխադարձ վստահության և հարգանքի, հաճախորդի շահերի առաջնայնության, պարտավորությունների անխախտելիության, անհրաժեշտ տեղեկատվության թափանցիկության, դատական քննությունից առաջ բանակցությունների առաջնայնության սկզբունքների հիման վրա:

6.2. Ընկերության աշխատակիցը չի տարածում հաճախորդների, գործընկերների, պետական մարմինների գործարքների, հաշիվների և ներդրումների մասին, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք կարող են վնաս հասցնել հաճախորդների, գործընկերների և պետական մարմինների գործարար համբավին, նյութական և ոչ նյութական շահերին, եթե նման տեղեկությունների տրամադրումը նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

6.3. Ընկերության աշխատակիցները պարտավոր են հարգանքով վերաբերվել Ընկերության Հաճախորդներին, մշտապես փնտրել Հաճախորդների հետ համագործակցության, նրանց պահանջմունքների ու սպասումների բացահայտման և բավարարման նոր ուղիներ, մատուցվող ծառայությունների վերաբերյալ Հաճախորդներին ներկայացնել բոլոր անհրաժեշտ մանրամասները՝ մատչելի և հստակ ձևով, նրանց նախապես տեղեկացնել համագործակցության պայմանների ու դրանց փոփոխությունների մասին, հրաժարվեն օրենսդրության պահանջներին չհամապատասխանող ծառայություն մատուցելուց:

6.4. Ընկերության աշխատակցին արգելվում է հաճախորդների, գործընկերների և պետական մարմինների հետ հարաբերություններում առաջնորդվել թաքնված նախապատվություններով:

6.5. Ընկերության աշխատակիցները պարտավոր են գործադրել բոլոր հնարավոր ջանքերը Ընկերության գործընկերների նկատմամբ պարտավորությունները բարեխիղճ կատարելու՝ բարձր պահելով Ընկերության կորպորատիվ հեղինակությունը և գործարար համբավը: Ընկերության գործընկերների հետ հարաբերությունները հարկավոր է կառուցել կողմերի հավասարության, փոխադարձ հարգանքի, ազնվության, բարեվարքության գործարար շահերի ապահովման սկզբունքների հիման վրա: Գործընկերների վերաբերյալ ցանկացած ոչ հանրամատչելի էական տեղեկատվություն օգտագործել միայն գործընկերոջ հետ պայմանագրի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

6.6. Ընկերության աշխատակիցները պարտավոր են ապահովել Ընկերության իրավական համապատասխանությունը, պետական մարմինների հետ փոխհարաբերություններում արտահայտել Ընկերության պաշտոնական դիրքորոշումը, ՀՀ օրենսդրությամբ չարգելված դեպքերում պետական մարմինների հարցումներին պատասխանել ժամանակին և տրամադրել ամբողջական և արժանահավատ տեղեկատվություն, խուսափել անօրինական եղանակներով պետական մարմինների որոշումների վրա ազդելուց, մոլորության մեջ չգցել պետական մարմիններին, ուղղակիորեն կամ անուղղակիորեն չխոչընդոտել նրանց կողմից տեղեկատվության, տվյալների, ցուցմունքների կամ այլ փաստաթղթերի հավաքագրման գործընթացին չթաքցնել, չփոխել, չվերացնել պետական մարմինների հետաքննության կամ հարցման առարկա հանդիսացող փաստաթղթերը:

ԳԼՈՒԽ 7. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ (ԳՈՒՅՔԻ) ՆԿԱՏՄԱՄԲ

7.1. Ընկերության աշխատակիցները պարտավոր են.

- պաշտպանել իրենց հանձնված գույքը կորուստից, կողոպուտից, ոչ նպատակային կամ անօրինական օգտագործումից,
- առավելագույնս արդյունավետ և խնայողաբար օգտագործել Ընկերության ակտիվները,
- պահպանել և չբացահայտել Ընկերության առևտրային տեղեկատվությունը,
- հետևել Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին, որոնք վերաբերում են Ընկերության ակտիվների օգտագործմանը,
- չօգտագործել Ընկերության գույքն անձնական նպատակներով:

ԳԼՈՒԽ 8. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

8.1. Ընկերության յուրաքանչյուր աշխատակից պետք է գիտակցի, որ շահերի բախումը կարող է առաջանալ այն դեպքում, երբ աշխատակցի անձնական գործունեությունը կամ հետաքրքրությունները խոչընդոտում կամ բախվում են, կամ կարող են խոչընդոտել և բախվել աշխատակցի պարտավորությունների հետ, որոնք էլ կարող են արգելք հանդիսանալ իրենց, ղեկավար մարմինների կամ հաճախորդների հետ ակտիվ համագործակցություն վարելու գործում: Պետք է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք պարունակում են շահերի բախման ռիսկի ծագման հնարավորություն կամ այդ մասին տեղեկացնել անմիջական ղեկավարին՝ ձևավորված իրավիճակը քննարկելու և լուծում տալու նպատակով:

8.2. Ընկերության աշխատակիցը պետք է խուսափի գործողություններից, որոնք կարող են հանգեցնել Ընկերության շահերից չբխող որոշումների կայացմանը (նվերների, դրամային և այլ տեսքով պարգևների և այլ օգուտների ընդունում), Ընկերության գործընկերների հետ հարաբերություններում խուսափի Ընկերության շահերին հակասող անձնական ու գործնական հետաքրքրություններից, ձեռնպահ մնա այնպիսի գործողություններից, որոնք բացասաբար են ազդում աշխատանքային պարտականությունների կատարման վրա:

8.3. Ընկերության աշխատակիցը պետք է խուսափի Ընկերության գործընկեր կազմակերպություններում անձնական ֆինանսական որևիցե պարգևատրումներից, բոնուսներից կամ այլ աշխատանքից՝ առանց Ընկերության գործադիր մարմնի/տնօրենների խորհրդի գրավոր համաձայնության: Չպետք է վճարովի ծառայություններ մատուցի այլ անձանց, հանդես գա որպես այլ առևտրային

կազմակերպության տնօրենների խորհրդի, գործադիր մարմնի անդամ կամ այլ պաշտոնատար անձ՝ առանց Ընկերության կառավարման համապատասխան մարմնի գրավոր համաձայնության:

8.4. *Ընկերությունը պարտավոր է.*

- ✓ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները շահերի բախումից խուսափելու համար,որոնք կարող են վնասել իրենց անկախությանն ու անաչառությունը,
- ✓ ձեռնպահ մնալ իրենց և հաճախորդի միջև շահերի բախման առարկա համարվող գործարքների կնքումից, դրա անհնարինության դեպքում նախապատվությունը տալ Հաճախորդի շահերին,
- ✓ Հաճախորդներին և գործատուին բացահայտել բոլոր այն էական գործոնները (ներառյալ իրենց կողմից արժեթղթերում սեփական ներդրումների իրականացումը), որոնք կարող են վնասել իրենց անկախությանն ու անաչառությունը,
- ✓ իր գործունեության իրականացման ընթացքում ձեռնարկել բավարար միջոցներ իր և իր հաճախորդների, ինչպես նաև իր տարբեր հաճախորդների, վերջինների և իր կողմից կառավարվող ֆոնդերի և տարբեր ֆոնդերի միջև շահերի հնարավոր բախումները կանխելու համար, իսկ դրանց անհնարինության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ դրանք նվազեցնելու համար,
- ✓ տեղեկացնել Ընկերության գործադիր մարմնի ղեկավարին իրենց պարտականությունների կատարման ընթացքում իրենց վրա գործադրվող ճնշումների վերաբերյալ:

8.5. Ընկերությունն ունի «Շահերի բախման քաղաքականություն», որով պետք է ապահովի այնպիսի ընթակարգերի գործարկումը, որոնք ուղղված են բացահայտելու, ուսումնասիրելու և կարգավորելու բոլոր հնարավոր կամ իրական հակասությունները, որպեսզի դրանք չվնասեն հաճախորդին կամ առհասարակ շուկաներին:

ԳԼՈՒԽ 9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

9.1. Ընկերությունն իր գործունեությունը պետք է իրականացնի խելամիտ զգուշավորությամբ, հետևողականորեն և ջանասիրաբար՝ հանգելով անաչառ եզրակացությունների:

9.2. Ընկերություն պարտավոր է գործել ի շահ իր հաճախորդների՝ հաճախորդների շահը իր անձնական, գործատուի կամ այլ երրորդ անձի շահից բարձր դասելով:

9.3. Ընկերության աշխատակիցները պարտավոր են մշտապես բարձրացնել իրենց մասնագիտական գիտելիքներն ու ունակությունները, հետևել ՀՀ օրենսդրության դրույթներին, ներքին իրավական ակտերին ու մասնագիտական էթիկայի կանոններին (առկայության դեպքում) և զերծ մնալ էթիկական ու բարոյական բնույթի ցանկացած խախտումից:

9.4. Կառավարիչը պետք է առաջնորդվի հետևյալ մասնագիտական չափանիշներով.

1. *Ողջամիտ և անաչառ ներկայացում. Կառավարիչը պարտավոր է.*

- ✓ ապահովել ողջամիտ հիմքեր ներդրումային գործունեության համար.
- ✓ հստակ տարանջատել փաստերը կարծիքներից, ընդգծել կանխատեսումները.
- ✓ ներկայացնել վերլուծությունները/եզրակացությունները հստակ և տրամաբանորեն կառուցքավորված՝ ցանկացած ոչ ճիշտ մեկնաբանությունից խուսափելու նպատակով,
- ✓ վերլուծական նյութերը պատրաստել մասնագիտական ջանասիրությամբ,
- ✓ ձեռնարկել բոլոր խելամիտ ջանքերը արտաքին աղբյուրներից ստացած տեղեկատվության հուսալիությունն ու իրավացիությունը ստուգելու նպատակով,
- ✓ զերծ մնալ ներդրումների արդյունքների վերաբերյալ գրավոր կամ բանավոր երաշխիքների տրամադրումից,
- ✓ ցուցաբերել ողջամտություն և զգուշավորություն երրորդ անձանց կողմից պատրաստված նյութերի օգտագործման դեպքում, նշել այդ նյութերի հեղինակի անունը, հրատարակությունը կամ նման տեղեկատվության աղբյուրը,
- ✓ զերծ մնալ հայտարարություններից, որոնք կարող են ապակողմնորոշել հաճախորդներին,
- ✓ ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ հաճախորդներին ժամանակին ներկայացնել արդարացի, ստույգ և ամբողջական տեղեկատվություն:

2. *Լոյալություն հաճախորդների նկատմամբ. Կառավարիչը պարտավոր է.*

- ✓ գերադասել հաճախորդի շահը ընկերության և սեփական շահից,
- ✓ հրաժարվել այնպիսի գործարար հարաբերություններում մասնակցությունից, որոնք կարող են ազդել նրանց անկախության, անաչառությունը և նպաստել հաճախորդի նկատմամբ իրենց լոյալության կորստին,
- ✓ պահպանել հաճախորդից ստացված տեղեկատվության գաղտնիությունը.

3. *Թրեյդինգ. Կառավարիչը պարտավոր է.*

- ✓ արժեթղթերի թրեյդինգի ժամանակ ձեռնպահ մնալ ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումից.
- ✓ նոր ներդրումային հնարավորության դեպքում բոլոր ֆոնդերի նկատմամբ ցուցաբերել միևնույն մոտեցումը, և եթե տվյալ ներդրումը համապատասխանում է բոլորին, ապա պատվերների համախմբումը կամ արդյունքների բաշխումը կատարել Ընկերության ներքին իրավական ակտերի և օրենսդրության պահանջների պահպանմամբ.
- ✓ գործադրել լավագույն ջանքերը ֆոնդի կանոնների շրջանակներում ներդրումներ կատարելու համար, իրականացնել համապատասխան գործողություններ ֆոնդի հաշվին գործարքի լավագույն գնով և պայմաններով կատարելու համար:

4. *Ռիսկերի կառավարում, համապատասխանություն. Կառավարիչը պարտավոր է.*

- ✓ հետևել Ընկերության քաղաքականություններին, կանոնակարգերին ու ընթացակարգերին և զարգացնել դրանք, որպեսզի Ընկերության գործունեությունը համապատասխանի ՀՀ օրենսդրության և նորմատիվ իրավական պահանջներին, ինչպես նաև Կանոնակարգով սահմանված սկզբունքներին ու չափանիշներին.
- ✓ աջակցել Ընկերության համապատասխան աշխատակցին՝ Հաճախորդների բողոք-պահանջների դիտարկման և կառավարման գործում.
- ✓ գործարքների վերաբերյալ կատարել Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված գրառումներ.
- ✓ նպաստել Ընկերությունում ռիսկերի կառավարման համակարգի ձևավորմանը, որը պետք է նույնականացնի ռիսկերի կառավարման մեթոդները:

ԳԼՈՒԽ 10. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Սույն Կանոններն ուժի մեջ են մտնում «Փրայմ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Տնօրենների խորհրդի կողմից հաստատվելու պահից:

10.2. Սույն Կանոններն ուժը կորցրած են ճանաչվում «Փրայմ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Տնօրենների խորհրդի կողմից այն ուժը կորցրած ճանաչելու պահից:

10.3. Սույն Կանոնների փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում «Փրայմ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Տնօրենների խորհրդի կողմից այն հաստատելու պահից:

10.4. Ընկերության աշխատակիցների կողմից Կանոններին հետևելը կարևոր պայման է Ընկերության առաքելության հաջող իրականացման, կորպորատիվ արժեքների ամրապնդման, Ընկերության շահառուների իրավունքների ու շահերի պաշտպանության համար: